հաշվի առնելով Հայցվորի կողմից պետական տուրքը նախապես վճարված լինելու փաստը, դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա՝ ղեկավարվելով քաղաքացիական դատավարության 168-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. Պատասխանողի միջնորդությունը բավարարել. «Էյայ Սփեյս» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ պատասխանող «Երքաղլույս» ՓԲԸ-ի՝ թիվ «ԵՔԼ-ԲՄՃԶԲ-24/1» ընթացա-կարգի ծածկագրով մեկ փուլով բաց մրցույթի հայտարարությունը /հրավերը/ և որպես հետևանք պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել հայցային վաղեմության ժամկետի կիրառման հիմքով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am